Նախագիծ, ենթակա է համալրման

ԶԵԿՈՒՅՑ

Ներածություն

Սույն հակիրճ զեկույցում ներկայացվում է հայաստանյան հասարակական կազմակերպությունների կողմից արձանագրված ոստիկանության աշխատակիցների կողմից քաղաքացիների նկատմամբ իրականացված ֆիզիկական բռնությունների, ճնշումների և խոշտանգման դեպքերը: Ներկայացվող տեղեկատվությունը ստացվել է թե' քաղաքացիների անձնական դիմումներից, թե' առանձին կազմակերպությունների կողմից իրականացված հետազոտությունների արդյունքում:

2008 թ. դեկտեմբերից մինչև 2009 թ. դեկտեմբերը Լոռու մարզում ոստիկանության աշխատակիցների կողմից դրսևորված հակաօրինական վարքագծի մասին

Նշված ժամանակահատվածում ոստիկանության աշխատակիցների վարքագիծը դրսևորվել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի՝ խոշտանգումների արգելում, «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա), ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի տարբեր հոդվածների խախտմամբ:

ՀՀ դատարանների կողմից խոշտանգումների փաստերի քննության ընթացքում թույլ են տրվել ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածների, ինչպես նաև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտումներ:

Ոստիկանության բաժանմունքներում գտնվելու ընթացքում քաղաքացիների նկատմամբ դաժան, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքն ունեցել է հետևյալ դրսևորումները.

- անազատության մեջ գտնվելու ընթացքում սննդից, ջրից, զուգարանից, դեղորայքից օգտվելու հնարավորության սահմանափակում
- ֆիզիկական բռնության ենթարկելու անմիջական սպառնալիք
- հոգեբանական ճնշումներ՝ հարազատներին պատասխանատվության ենթարկելու սպառնալիքով
- պետության կողմից խոշտանգումների վերաբերյալ հաղորդումների արդյունավետ քննության բացակայություն
- անչափահասների հարցաքննություն՝ առանց օրինական ներկայացուցիչների
- գտնվելու վայրի մասին ընտանիքի անդամներին կամ հարազատներին տեղեկություն տրամադրելու հնարավորության սահմանափակում:

Խոշտանգումների վերաբերյալ ՀՀ ազգային օրենսդրությունը

Բռնությունների, դաժան, անմարդկային վերաբերմունքի դրսևորումների պատճառները կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

- օրենսդրական թերություններ
- օրենսդրության կիրառման պրակտիկայի չարաշահումներ:

ՀՀ օրենսդրության թերությունները դրսևորվում են

- քաղաքացիներին ոստիկանություն բերման ենթարկելու, ոստիկանության բաժանմունքներում պահելու
- ոստիկանության աշխատակցների կողմից կարգապահական խախտումներ թույլ տալու դեպքում պատասխանատվություն կիրառելու
- խոշտանգումների փաստերի կապակցությամբ արդյունավետ քննության իրականացման
- ոստիկանություն բերման ենթարկված /մինչև ձերբակալման որոշում կայացնելը/ ոստիկանությունում գտնվող անձնաց իրավական պաշտպանության բացակայության
- բերման ենթարկելուց մինչև ձերբակալման վերաբերյալ որոշում կայացնելը հասարակական վերահսկողության բացակայության դեպքերում:

Այսպես՝
ՀՀ օրենսդրությամբ անձին ոստիկանության բաժին տեղափոխելու համար սահմանված են

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
ինտերնետային կայք՝ www.hcav.am, www.hrlori.am
59 Tigran Mets st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am. URL: www.hcav.am, www.hrlori.am

հետևյալ իրավական հիմքերը:

1. Քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 153-րդ հոդվածի համաձայն՝ անձը ոստիկանության բաժին կարող է բերման ենթարկվել հետևյալ դեպքերում.
   - եթե ունի համապատասխան իրավական կարգավիճակ, այսինքն՝ հանդիսանում է կասկածյալ, մեղադրյալ, ամբաստանյալ, վկա, տուժող
   - եթե առանց հարգելի պատճառի հետաքննություն իրականացնող մարմնի ծանուցումը (հրավերը) ստանալուց հետո խուսափել է ներկայանալ ոստիկանություն:

   Նույն օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի, 55-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ վերը նշված դեպքերում անձին բերման ենթարկելու մասին որոշում կայացնելու իրավասությամբ օժտված են դատախազը, քննիչը, հետաքննիչը: Նույն լիազորությամբ օժտված է նաև դատավորը:
   «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետի համաձայն՝ ոստիկանության աշխատակիցները հանդիսանում են այդ որոշումների կատարումն ապահովողները և կարող են անձին բերման ենթարկել միայն դրա իրավասությունն ունեցող մարմնի կողմից բերման ենթարկելու մասին որոշում կայացնելու և որոշման կատարման վերաբերյալ գրավոր հանձնարարական ստանալու դեպքում:
   *Փաստորեն, բերման ենթարկելու **<u>առաջին հիմքը</u>** սահմանվում է հարուցված քրեական գործի շրջանակներում իրավասու մարմնի որոշմամբ, երբ անձին տրվել է համապատասխան դատաիրավական կարգավիճակ, և նա ծանուցումն ստանալուց հետո չի ներկայացել:*

2. Օրենսգրքի 180-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոստիկանության աշխատակիցը կարող է քաղաքացուն բերման ենթարկել առանց համապատասխան դատաիրավական կարգավիճակի և առանց նախապես ծանուցման՝
   - հանցագործություն կատարելու ***<u>բավարար հիմքերի</u>*** առկայության դեպքում, այսինքն՝ հանցագործության մասին հաղորդում ստանալու յուրաքանչյուր դեպքում մինչև քրեական գործի հարուցումն ընկած 10 օրյա ժամկետում, երբ առկա են հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքեր, դատախազի, քննիչի, հետաքննիչի կողմից կայացվում է որոշում:

   *Փաստորեն, բերման ենթարկելու **<u>երկրորդ հիմքը</u>** սահմանվում է մինչև քրեական գործի հարուցումը, երբ անձը չունի համապատասխան դատաիրավական կարգավիճակ, սակայն քրեական գործ հարուցելու հիմքերը ստուգելու համար անհրաժեշտ են որոշակի գործողություններ, այդ թվում՝ անձին բերման ենթարկել իրավասու մարմնի որոշմամբ:*

3. Օրենսգրքի 131[1]-րդ հոդվածի համաձայն՝ անձը բերման կարող է ենթարկվել նաև ՀՀ քրեական օրենսգրքով արգելված արարք թույլ տալու պահին կամ դրանից անմիջապես հետո:
   Օրենքի 19-րդ հոդվածը թույլ է տալիս ոստիկանության աշխատակցին անձին բերման ենթարկել առանց դատախազի, քննիչի, հետաքննիչի որոշման, սեփական նախաձեռնությամբ, ***<u>եթե</u>*** այդ անձին ոստիկանը հայտնաբերել է հանցագործության կատարման պահին կամ նրա մոտ հայտնաբերել է հանցագործության վերաբերյալ հետքեր կամ այդ անձին որպես ՀՀ քրեական օրենսգրքով արգելված արարք, վարչական իրավախախտում թույլ տված, մատնանշել են այլոք:
   *Փաստորեն, բերման ենթարկելու **<u>երրորդ հիմքը</u>** սահմանվում է ՀՀ քրեական օրենսգրքով արգելված արարք թույլ տալու պահին (որոշ դեպքերում նաև վարչական իրավախախտում), դրանից անմիջապես հետո կամ դրա հետքերը հայտնաբերելու դեպքում ոստիկանի սեփական նախաձեռնությամբ:*

Նշված նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ոստիկանություն անձին տեղափոխելու ազգային օրենսդրությամբ սահմանված իրավական հիմքերը բավականին լայն են: Բերման ենթարկելը թույլատրվում է թե՛ դատավորի, դատախազի, քննիչի, հետաքննիչի որոշման հիման վրա, թե՛ ոստիկանի սեփական նախաձեռնությամբ՝ մինչև քրեական գործ հարուցելը, քրեական գործ հարուցելուց հետո, հանցագործության կատարման պահին, դրանից հետո կամ դրա վերաբերյալ հետքերը հայտնաբերելու դեպքում:

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
ինտերնետային կայք՝ www.hcav.am, www.hrlori.am
59 Tigran Mets st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am. URL: www.hcav.am, www.hrlori.am

2009-2010 թթ. ընթացքում Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից արձանագրվել է ոստիկանության աշխատակիցների կողմից քաղաքացիների նկատմամբ ֆիզիկական բռնությունների, հոգեբանական ճնշումների և սպառնալիքների ավելի քան 15 դեպք, որից 8-ը՝ 2009 թվականին, 7-ը՝ մինչև 2010 թվականի հուլիսը: Փաստերից 14-ի կապակցությամբ հաղորդում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

Մինչ օրս ներկայացված հաղորդումներից ոչ մեկի կապակցությամբ քրեական գործ չի հարուցվել:

Քրեական գործ չհարուցելու 3 որոշում կազմակերպության կողմից բողոքարկվել է դատական կարգով, որոնցից 2-ը գտնվում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանում, 1-ը՝ ՀՀ վճռաբեկ դատարանում:

Կազմակերպության կողմից արձանագրված բռնությունների, դաժան, անմարդկային վերաբերմունքի դրսևորման փաստերից ոչ մեկի դեպքում անձինք նախապես ծանուցում չեն ստացել ոստիկանության բաժին բերման ենթարկելու վերաբերյալ, մոտ 60%-ի դեպքում անձինք ոստիկանության բաժին բերման են ենթարկվել առանց համապատասխան իրավական կարգավիճակի:

Բացի այդ, առանց իրավական կարգավիճակի անձանց ոստիկանության բաժին բերման ենթարկվելու, այնտեղ մնալու վերաբերյալ որևէ արձանագրություն չի կազմվել, ինչը շատ հաճախ հնարավորություն չի տվել ստույգ նշել, թե ինչ տևողությամբ են բերման ենթարկված անձինք պահվել ոստիկանությունում:

2009 թվականի գործեր

Գործ 1

Դեպքի նկարագրություն

2008 թ. դեկտեմբերի 5-ին՝ առավոտյան ժամը 09:00-ին, ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժնի Բազումի բաժանմունքի երեք աշխատակիցների կողմից Լոռու մարզի Գուգարք գյուղի բնակիչ Մ.Հ.-ն բերման է ենթարկվել ոստիկանության Վանաձորի բաժնի Բազումի բաժանմունք՝ առանց ներկայացնելու բերման ենթարկելու պատճառը և վերջինիս իրավական կարգավիճակը:

Այդ նույն օրը Մ.Հ.-ն պատրաստվում էր մեկնել բանակ և մի քանի ժամից պետք է ներկայանար համապատասխան զինվորական կոմիսարիատ:

Ոստիկանության բաժնում Մ.Հ.-ն սկզբում պահվել է ոստիկանության աշխատակիցներից մեկի սենյակում, որտեղ նրան տեղեկացրել են, որ իրեն կանչել են նախորդ օրը կայացած դանակահարության վերաբերյալ տեղեկություն ստանալու համար: Այդ աշխատասենյակում Մ.Հ.-ն մնացել է մոտ 1.5 ժամ, հետո նրան տեղափոխել են մեկ այլ աշխատասենյակ և ոստիկանության երեք աշխատակիցների ներկայությամբ պահանջել դատարկել գրպանների պարունակությունը: Այս աշխատասենյակում Մ.Հ.-ն մնացել է մոտ մեկ ժամ, որի ընթացքում նրա ներկայությամբ ոստիկանության աշխատակիցները պահարանից ուտելիք են հանել և գնացել ընդմիջման՝ Մ.Հ-ին թողնելով սենյակում:

Ընդմիջումից հետո ոստիկանության աշխատակիցները բաժին են հրավիրել Մ.Հ.-ի հորը և թողել, որ վերջիններս առանձին զրուցեն մոտ 5 րոպե՝ որոշելու, թե Մ. Հ.-ն ներկա է եղել դանակահարությանը, թե ոչ:

Այնուհետև Մ.Հ.-ն տեղափոխվել է այլ սենյակ, որտեղ նրան մոտ 30 րոպե մենակ են թողել, հետո նորից հարցրել, թե «Ի՞նչ որոշեց դանակահարությանն իր ներկա լինելու վերաբերյալ»:

Մ.Հ.-ն տեղեկացրել է, որ զուգարանից օգտվելու կարիք է զգում, սակայն նրան պատասխանել են, որ դրա ժամանակը չէ:

Ժամը 14:30-ի սահմաններում Մ.Հ.-ին տեղափոխել են կոչումով ավելի բարձր ոստիկանության աշխատակցի սենյակ, որտեղ վերջինս Մ.Հ.-ին սպառնացել է, թե «եթե իմ ասած ձևով չասես, քեզ կտանենք գաղութ» ու հրահանգել, որ Մ.Հ.-ի ձեռքից վերցնեն իրերը և նրան տեղափոխեն ձերբակալվածների ժամանակավոր պահման սենյակ՝ խուց:

Մի քանի ժամ այնտեղ մնալուց հետո Մ.Հ.-ին նորից տեղափոխել են կոչումով ավելի բարձր ոստիկանության աշխատակցի սենյակ, նորից հարցաքննել՝ խոստանալով, որ իրենց ուզած ձևով հարցերին պատասխանելուց հետո նրան ազատ կթողնեն, և նա կմեկնի բանակ:

Մ.Հ.-ն ստել է և ոստիկանություն հրավիրված քննիչին ցուցմունքներ տվել այն մասին, որ ինքը ներկա է եղել դանակահարությանը: Այս ցուցմունքներն արձանագրվել են մոտ 2 ժամվա ընթացքում:

Ցուցմունքներն արձանագրելուց հետո ոստիկանության աշխատակիցը քննիչի հետ մեքենայով Մ.Հ.-ին տեղափոխել է դեպքի վայր, նկարել հեռախոսով, թղթեր լրացրել, որոնց տակ ստորագրելու

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
ինտերնետային կայք՝ www.hcav.am, www.hrlori.am
59 Tigran Mets st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am. URL: www.hcav.am, www.hrlori.am

համար հրավիրել են մոտակա շենքի երկու բնակիչների:

Դեպքի վայրից ոստիկանության աշխատակիցը Մ.Հ.-ին տեղափոխել է ոստիկանության այլ բաժին, որտեղ Մ.Հ.-ին նորից հարցաքննել են արդեն քննիչի սենյակում:

Մ.Հ.-ի ներկայությամբ հեռախոսով ոստիկանություն են հրավիրել դեպքի ենթադրյալ մեկ այլ մասնակցի՝ Տ.-ին: Նրան ասել են, որ գտել են իր կորած անձնագիրը, որը կարող է վերցնել ոստիկանությունից: Այն ժամանակ, երբ Տ.-ն հայտնել է, որ ինքն արդեն նոր անձնագիր ունի, ոստիկանության աշխատակիցներն ասել են, որ «զրուցելու բան կա»:

Ոստիկանության բաժին Տ.-ն ներկայացել է երեկոյան ժամը 19:30-ի սահմաններում:

Ոստիկանության բաժնում Տ.-ին և Մ.Հ.-ին ներկայացրել են առերեսման: Տ.-ն տեղեկացրել է, որ ինքը Մ.Հ.-ին չի ճանաչում, նրա գրածների հետ համաձայն չի կարող լինել և պահանջել է իր փաստաբանի մասնակցությունը գործին:

Մ.Հ.-ն ոստիկանության աշխատակցին տեղեկացրել է, որ իրեն վատ է զգում և խնդրել է զանգահարել հորը՝ փաստաբան ներգրավելու համար, սակայն նրան մերժել են:

Երբ ներկայացել է Տ.-ի փաստաբանը, վերջինս հետաքրքրվել է, թե ինչու է Մ.Հ.-ն իրեն վատ զգում:

Մ.Հ.-ն բացատրել է, որ առավոտյան մոտ ժամը 10:00-ից ինքը հաց չի կերել, ջուր չի խմել, Տ.-ի փաստաբանն արձանագրել է այս հանգամանքն համապատասխան մատյանում:

Այնուհետ Մ.Հ.-ին տեղափոխել են ոստիկանության Վանաձորի բաժնի քննչական բաժնի պետի սենյակ՝ առերեսման:

Երեկոյան ժամը 23:30-ի սահմաններում Մ.Հ.-ին թույլատրել են տուն գնալ:

Կազմակերպության կողմից ձեռնարկված միջոցառումները և պետության դիրքորոշումը

Դեպքի կապակցությամբ կազմակերպությունը 2008 թ. դեկտեմբերի 8-ին հաղորդում է ուղարկել ՀՀ գլխավոր դատախազություն՝ պահանջելով քրեական պատասխանատվության ենթարկել ոստիկանության աշխատակիցներին անօրինական գործողությունների փաստի առթիվ:
Նշանակվել է ծառայողական քննություն:

Ծառայողական քննության արդյունքում ոստիկանության աշխատակիցները որևէ պատասխանատվության չեն ենթարկվել:

Կազմակերպությունը նորից դիմել է ՀՀ գլխավոր դատախազություն՝ իրավախախտում թույլ տրված իրավապահ մարմինների ներկայացուցիչների նկատմամբ քրեական գործ հարուցելու պահանջով: Գլխավոր դատախազությունը մերժել է քրեական գործի հարուցումը՝ հանցագործության փաստի բացակայության պատճառով:

Կազմակերպության կողմից քրեական գործ չհարուցելու մասին որոշումը բողոքարկվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան: Դատարանը ևս մերժել է կազմակերպության դիմումը:

Ընդհանուր իրավասության դատարանի որոշումը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան,այնուհետև ՀՀ վճռաբեկ դատարան, որտեղ ևս կազմակերպության բողոքը մերժվել է:
Կազմակերպության կողմից բողոք է ներկայացվել Եվրոպական դատարան՝ Եվրոպական կոնվենցիայի 3, 5, 6 հոդվածների խախտման համար:

Գործ 2

Դեպքի նկարագրություն

2008 թ. դեկտեմբերի 12-ին վերը շարադրված գործ 1-ում ներկայացված քրեական գործի շրջանակներում ոստիկանության բաժին է հրավիրվել Լոռու մարզի Գուգարք գյուղի անչափահաս բնակչուհի Մ.Գ.-ն՝ որպես վկա:

2008 թվականի օգոստոսի 20-25-ն ընկած ժամանակահատվածում ոստիկանության աշխատակիցները քաղաքացիական համազգեստով եկել են Մ.Գ.-ի տուն: Սկզբում, երբ Մ.Գ.-ն տանը չի եղել, նրա մորը ոստիկանության աշխատակիցները ներկայացել են որպես Մ.Գ.-ի ծանոթի՝ Դ.-ի ընկերներ /վերջինիս մասին է այնուհետև կայացել Մ. Գ.-ի ամբողջ հարցաքննությունը/:

Երբ Մ.Գ.-ն եկել է տուն, հետաքրքրվել, թե ովքեր են, ինչ են ուզում, ասել են՝ «Կպարզենք ոստիկանության բաժանմունքում»: Մ.Գ.-ն հրաժարվել է նրանց հետ բաժին գնալ, ոստիկանության աշխատակիցներն էլ սպառնացել են. «Եթե չգաս, քո ետևից «Վիլիս» մակնիշի ավտոմեքենա կգա, ու բոլորը կտեսնեն հարկադիր տեղափոխումը»: Ժամը 20:30-ի սահմաններում ոստիկանության աշխատակիցները Մ. Գ.-ին տեղափոխել են ոստիկանության բաժին, առանց օրինական ներկայացուցչի կամ մանկավարժի:

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
ինտերնետային կայք՝ www.hcav.am, www.hrlori.am
59 Tigran Mets st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am. URL: www.hcav.am, www.hrlori.am

Մ.Գ.-ին ոստիկանության երկու աշխատակիցների մասնակցությամբ ոստիկանության աշխատակիցներից մեկի աշխատասենյակում հարցեր են տվել, թե արդյոք ինքը ճանաչում է Դ.-ին և այլն: Այդ հարցերին Մ.Գ.-ն բացասական պատասխան է տվել, ինչը զայրացրել է ոստիկանության աշխատակիցներին: Մոտ 40 րոպե անց ոստիկանության աշխատակիցներից մեկի հրահանգով Մ.Գ.-ին տեղափոխել են մեկ այլ աշխատասենյակ՝ մատնահետքեր վերցնելու: Այս սենյակում ևս Մ.Գ.-ին հարցաքննել են մինչև երեկոյան 12:30-ը: Մ.Գ.-ն խնդրել է իրեն թույլատրել տուն գնալ, սակայն մերժել են: Ժամը 01:30-ին Մ.Գ.-ին ոստիկանության աշխատակիցներն իրենց մեքենայով տուն են տարել՝ պայմանով, որ առավոտյան ժամը 10:00-ին նորից ներկայանա ոստիկանության բաժին:

Առավոտյան ոստիկանություն Մ.Գ.-ն գնացել է երթուղային տաքսիով և տեսել է, թե ինչպես է իրեն «ուղեկցում» ոստիկանության նախորդ օրվա աշխատակիցն իր մեքենայով:

Կանգառում ոստիկանության աշխատակիցն իջել է մեքենայից, մոտեցել Մ.Գ.-ին և ասել, որ ինքն էլ նրա ետևից է եկել:

Մ.Գ.-ին տարել են ոստիկանության աշխատակցի աշխատասենյակ, որտեղ նրան նախորդ օրվա հարցերն են տվել և սպառնացել, որ «եթե լավ չհիշի իրենց տված հարցերի պատասխանը, այդ օրը տուն չի գնա»:

Մի քանի ժամ անց Մ.Գ.-ին թույլ են տվել տուն գնալ, բայց մի քանի օր անց ոստիկանության աշխատակիցները նրան տարել են ոստիկանության մեկ այլ բաժին: Այստեղ Մ.Գ.-ին տեղեկացրել են, որ պետք է առերեսում իրականացվի այն անձի վերաբերյալ, որի մասին նրան հարցեր էին տալիս:

Մ.Գ.-ն սենյակում տեսել է այդ անձին, սակայն դրանից հետո էլ պնդել է, որ ինքը նրան չի ճանաչում: Մ.Գ.-ին տեղափոխել են ոստիկանության մեկ այլ, պաշտոնով ավելի բարձր աշխատակցի սենյակ, որտեղ ևս Մ.Գ.-ն պնդել է իր խոսքերը: Դրան ի պատասխան ոստիկանության այդ աշխատակիցը վիրավորական խոսքեր է հնչեցրել այդ տղայի հասցեին, այնուհետև Մ.Գ.-ին սպառնացել, որ ինքն այնպես կանի, որ Մ.Գ.-ն չամուսնանա այդ տղայի հետ կամ Մ. Գ.-ին «փախցնել կտա»:

Այդ օրը Մ.Գ.-ին թույլ են տվել ոստիկանությունից տուն գնալ ժամը մոտ 12:00-ին:

Մի քանի օր անց իրենց թաղամասում ճանապարհին Մ. Գ.-ին հանդիպել է մի տղա, որի ձեռքին դանակ է եղել: Վերջինս, դանակի հետ խաղալով, Մ.Գ.-ին ասել է, որ Մ.Գ.-ն պատմի այդ տղայի պատմության մասին: Մ.Գ.-ն ասել է, որ ինքը ոչ մի բանից տեղյակ չէ և հաջորդ անգամ իր ճանապարհին հայտնվելու դեպքում կտեղեկացնի համապատասխան իրավասու մարմիններին:

Մեկ օր անց այդ նույն տղան նորից է հայտնվել Մ.Գ.-ի ճանապարհին, քաշել նրա ձեռքից, ստիպել, որ կանգնի և խոսի իր հետ, սպառնացել, որ հակառակ դեպքում. «սիգարետը ճակատիդ կհանգցնեմ»:

Այդ նույն տղան մի քանի օր շարունակ հայտվել է Մ. Գ.-ի ճանապարհին, նրա հասցեին սպառնալիքներ հնչեցրել:

2008 թվականի դեկտեմբերի 5-ին՝ երեկոյան ժամը 22:30-ի սահմաններում, ոստիկանության աշխատակիցները նորից են եկել Մ.Գ.-ի ետևից: Այս անգամ Մ.Գ.-ի հետ ոստիկանություն է գնացել նրա հայրը: Ոստիկանությունում Մ.Գ.-ին ասել են, որ նա նախկինում սխալ ցուցմունքներ է տվել, քանի որ մեկ ուրիշը ցուցմունքներ է տվել այն մասին, որ Մ.Գ.-ն ճանաչում է Դ.-ին: Մ.Հ.-ին առերեսման են ներկայացրել մի տղայի հետ, որին նա չի ճանաչել: Այդ տղան ցուցմունքներ է տվել այն մասին, որ ինքը ճանաչում է Մ.Գ.-ին: Այնուհետև ոստիկանների ճնշումների ազդեցությամբ Մ.Գ.-ն նույնպես ցուցմունքներ է տվել այն մասին, որ ճանաչում է Մ.Գ.-ին և Դ.-ին:

2008 թվականի դեկտեմբերի 12-ին Մ.Գ.-ն հաղորդում է ներկայացրել Լոռու մարզի դատախազություն (պատճենը՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ղեկավարին)՝ 2008 թ. օգոստոսի 20-25-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժնի Բազումի բաժանմունքի աշխատակիցների կողմից իրեն ապօրինի ազատազրկման մեջ պահելու, իր նկատմամբ հոգեբանական ճնշումների վերաբերյալ:

Լոռու մարզի դատախազությունն այդ կապակցությամբ որևէ պատասխան չի տրամադրել:

Կազմակերպության կողմից ձեռնարկված միջոցառումները և պետության դիրքորոշումը

Կազմակերպությունը դեկտեմբերի 22-ին մեկ անգամ ևս դիմել է Լոռու մարզի դատախազություն՝ Մ. Գ.-ի՝ 2008 թ. դեկտեմբերի 12-ի հաղորդումների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար:

Ի պատասխան՝ Լոռու մարզի դատախազությունը 2008 թ. դեկտեմբերի 23-ի գրությամբ հայտնել է, որ հաղորդումն ուղարկվել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության և ոստիկանության Լոռու մարզային վարչության պետերին՝ հիշյալ դեպքերի կապակցությամբ ծառայողական քննություն կատարելու համար:

2009 թ. հունվարի 15-ին գրավոր դիմելուց հետո ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչությունը 2009 թ. հունվարի 29-ին ուղարկել է կազմակերպության 08.12.08 թ. հաղորդման և Մ.Գ.-ի

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
ինտերնետային կայք՝ www.hcav.am, www.hrlori.am
59 Tigran Mets st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am. URL: www.hcav.am, www.hrlori.am

դիմումի հիման վրա կատարված ծառայողական քննության եզրակացության մեկ օրինակը:

Կատարված ծառայողական քննության եզրակացության համաձայն՝ հաստատվել է, որ 05.12.2008 թ. Մ.Գ.-ն բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժնի Բազումի բաժանմունք, սակայն Գ.Մ.-ի կողմից բերման ենթարկելու մասին արձանագրությունը կազմվել է շուրջ 4 ժամ ուշացումով, իսկ Մ.Գ.-ն 13.08.2008 թ.՝ ժամը 19.30-ից մինչև 24.00-ն, գտնվել է ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժնի Բազումի բաժանմունքում՝ առանց ծայրահեղ անհրաժեշտության, բաժանմունքի պետի գիտությամբ:

Ծառայողական քննությամբ միաժամանակ արձանագրվել է, որ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժնի Բազումի բաժանմունքի պետի տեղակալը, ոստիկանության մայորը և նույն բաժանմունքի քրեական հետախուզության օպերլիազորը ենթակա են կարգապահական տույժի: Սակայն, հիմնվելով այն բանի վրա, որ վերջիններս նշված խախտումը թույլ են տվել առաջին անգամ, զղջացել են, բնութագրվում են դրական, գործող կարգապահական տույժ չունեն, որոշվել է նրանց նկատմամբ ծառայողական քննությունը դադարեցնել:

Գործ 3

Դեպքի նկարագրություն

2009 թ. հունվարի 10-ին Վանաձոր քաղաքի բնակիչ Ս.Ա.-ն և Հ.Գ.-ն, որոնց 16 տարին դեռևս չի լրացել, բերման են ենթարկվել ՀՀ ոստիկանության Լոռու մարզի վարչության Վանաձորի բաժնի Բազումի բաժանմունք՝ առանց հայտնելու նրանց ոստիկանության բաժին տեղափոխելու պատճառը:

Շենքի բակ իջնելիս՝ դեռևս շքամուտքից դուրս չեկած, 5-6 մարդ, որոնց թվում նաև ոստիկանության համազգեստով անձինք, միանգամից բռնել են Ս.Ա.-ի և Հ.Գ.-ի թևերից և, առանց որևէ բառ ասելու, նստեցրել 2 տարբեր մեքենաներ:

Ս.Ա.-ն մինչև մեքենան նստելը ոստիկանության աշխատակցին խնդրել է թույլ տալ իրեն գնալ տուն և տեղեկացնել իրեն տեղափոխելու մասին, բայց նրան մերժել են:

Մինչ ոստիկանության բաժանմունք հասնելը մեքենայում Ս.Ա.-ն նորից խնդրել է տեղեկացնել ընտանիքի անդամներին, սակայն նրան ասել են՝ «ձայնդ կտրիր» և հայհոյել:

Ճանապարհին ոստիկանության աշխատակիցը հարցրել է. «Ինչու՞ ես գնացել Հ.-ի տուն»: Ս.Ա.-ն պատասխանել է, որ վերջինս իր ընկերն է, խնդրել է գնալ իրենց տուն՝ բջջային հեռախոսի քարտ լիցքավորելու: Հետո ոստիկանության աշխատակիցը Ս.Ա.-ից վերցրել է հեռախոսը և հարցրել է, թե որտեղից է գողացել այն: Երբ Ս.Ա.-ն պատասխանել է, որ չի գողացել, ոստիկանության աշխատակիցը հայհոյել է նրան, պահանջել է անջատել հեռախոսը և դնել գրպանը:

Բազումի բաժանմունքում Ս.Ա.-ին և Հ.Գ.-ին պահել են տարբեր աշխատասենյակներում:

30 րոպե անց 3 ոստիկանության աշխատակիցներ ներս են մտել այն սենյակ, որտեղ պահվել է Ս.Ա.-ն, և վերջինիս հարցեր տվել Հ.-ի մասին, երբ նա պատասխանել է, որ իր մանկության ընկերն է: Ոստիկանության աշխատակիցներն այնուհետև պահանջել են պատմել Հ.-ի՝ քաղաքի տարբեր թաղամասերում ապրող ընկերների մասին:

Երբ Ս.Ա.-ն պատասխանել է, որ նրանց մասին ոչինչ չգիտի, ոստիկանության աշխատակիցը սպառնացել է. «Պատասխանի, թե չէ հիմա կնստեցնեմ էլեկտրական պլիտայի վրա» և մատնացույց արել սենյակը տաքացնող էլեկտրական սալիկը:

Այդ ընթացքում սենյակից ոստիկանության 2 աշխատակիցները դուրս են եկել: Ս.Ա.-ն սենյակում մնացած ոստիկանության աշխատակցին խնդրել է իր գտնվելու մասին տեղեկացնել ընտանիքի անդամներին, որը մերժել է, հետո էլ ապտակել է Ս.Ա.-ին և հայհոյել: Այդ աշխատասենյակում Ս.Ա.-ն մնացել է 1-1.5 ժամ:

15:30-16:30-ն ընկած ժամանակահատվածում Ս.Ա.-ին տեղափոխել են այլ աշխատասենյակ, որտեղ 3 աշխատող են եղել: Նրանցից մեկը պահանջել է բջջային հեռախոսը դնել սեղանին: Հետո նա վերցրել է բջջային հեռախոսը և դրել է իր գրպանը: Այդ ընթացքում պարբերաբար սենյակ են մտել ոստիկանության տարբեր աշխատակիցներ, ապտակել, խփել Ս.Ա.-ի գլխին, ասելով՝ «ի՞նչ կա արա»:

Մոտ ժամը 18:00-ին բոլորը դուրս են եկել այդ աշխատասենյակից, Ս.Ա.-ն այդտեղ մնացել է մինչև ժամը 20:30-ը: Այդ ընթացքում նա տեսել է, թե ինչպես են դիմացի աշխատասենյակում ոստիկանության աշխատակիցները ծեծում Հ.Գ.-ին և պարբերաբար հայհոյում:

Մոտ 1 ժամ անց ոստիկանության աշխատակիցը տեղեկացրել է, որ կարող է տուն գնալ, բայց փողոց չպետք է դուրս գա, սպառնացել, որ ծնողներին ոստիկանությունում գտնվելու մասին ոչինչ պետք չէ հայտնել, այլապես. «Կգամ երկու-երեք օր անընդհատ կտանեմ բաժին, հետո ձեր թաղի տղերքին կտանեմ բաժին ու կասեմ, որ դու ես իրենց անունները տվել»:

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
ինտերնետային կայք՝ www.hcav.am, www.hrlori.am
59 Tigran Mets st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am. URL: www.hcav.am, www.hrlori.am

Կազմակերպության կողմից ձեռնարկված միջոցառումները և պետության դիրքորոշումը

Կազմակերպությունը 2009 թ. հունվարի 17-ին հաղորդում է ուղարկել ՀՀ գլխավոր դատախազին, պատճենը՝ Լոռու մարզի դատախազին՝ Ս.Ա.-ին ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժնի Բազումի բաժանմունքի աշխատակիցների անօրինական գործողությունների վերաբերյալ:

Նշանակվել է ծառայողական քննություն, որի շրջանակներում նորից հարցաքննված Ս.Ա.-ն հրաժարվել է կազմակերպությանը հայտնած իր տեղեկություններից, միաժամանակ ծառայողական քննության եզրակացության մեջ նշվել է, որ «Ս.Ա.-ն ոստիկանության բաժանմունքում գտնվել է իր ցանկությամբ և ցանկացած պահի դուրս գալու հնարավորություն է ունեցել ինչպես աշխատասենյակից, այնպես էլ վարչական շենքից»:

Արդյունքում որոշվել է դադարեցնել ծառայողական քննությունը, քանի որ համաձայն ծառայողական քննության եզրակացության՝ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժնի Բազումի բաժանմունքի աշխատակիցների կողմից Ս.Ա.-ին և Հ.Գ.-ին ապօրինի ոստիկանություն տեղափոխելու, պահելու, նրանց նկատմամբ ֆիզիկական բռնությունների, ճնշումների փաստերը չեն հիմնավորվել:

Գործ 4

Դեպքի նկարագրություն

2009 թ. փետրվարի 9-ին Վանաձոր քաղաքի բնակիչ Ա.Վ.-ն նույն քաղաքի Տիգրան Մեծի պողոտայից գողություն կատարելու կասկածանքով բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժին:

Ոստիկանությունում Ա.Վ-ն աշխատակիցների կողմից ենթարկվել է ծեծի ոստիկանության Վանաձորի բաժնի պետի և նրա տեղակալի ներկայությամբ: 2009 թ. փետրվարի 12-ին Ա.Վ.-ն ոստիկանության բաժնից տեղափոխվել է «Վանաձոր» ՔԿՀ, որտեղ մարմնական զննության մատյանում կատարվել են գրառումներ նրա մարմնի տարբեր հատվածներում առկա վնասվածքների մասին, մասնավորապես՝ քերծվածքներ են եղել աջ ձեռքի ցուցամատի և ճկույթի վրա, ինչպես նաև գլխի գագաթնային և աջ շրջանում:

Ա.Վ-ն պնդել է, որ այդ վնասվածքները առաջացել են ոստիկանության աշխատակիցների կողմից ծեծի հետևանքով:

Ոստիկանության Վանաձորի բաժնի մի խումբ աշխատակիցներ Ա.Վ.-ին դաժան ծեծի են ենթարկել: Ոստիկանության բաժին բերման ենթարկելու, ինչպես նաև ոստիկանության բաժնից քրեակատարողական հիմնարկ տեղափոխելու ժամանակ Ա.Վ.-ի մարմնական զննության վերաբերյալ որևէ գրառումներ համապատասխան մատյաններում չեն իրականացվել: 2009 թ. փետրվարի 12-ին «Վանաձոր» ՔԿՀ-ի կալանավորված անձանց ընդունման զննության մատյանում գրառում է կատարվել այն մասին, որ Ա.Վ.-ն «Վանաձոր» ՔԿՀ է ընդունվել աջ ձեռքի ցուցամատի և ճկույթի վրա քերծվածքներով, բացի այդ գլխի գագաթնային և աջ շրջանում քերծվածքներ կան, որոնք ըստ կալանավորի՝ առաջացել են 09.02.2009 թ.՝ ժամը 22.00-ի սահմաններում, ոստիկանության Վանաձորի բաժնի աշխատակիցների կողմից ծեծի ենթարկվելու պատճառով:

Կազմակերպության կողմից ձեռնարկված միջոցառումները և պետության դիրքորոշումը

2009 թ. փետրվարի 27-ին կազմակերպությունը հաղորդում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազություն՝ խնդրելով քրեական գործ հարուցել դեպքի կապակցությամբ:

ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնից 2009 թ. մարտի 28-ին ստացված գրության համաձայն՝ Լոռու մարզի քննչական բաժնի վարույթում գտնվող քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել է, որ մեղադրյալ Ա. Վ.-ն նշված վնասվածքները՝ գլխի գագաթ-ծոծրակային շրջանի, աջ քունքային շրջանի, աջ դաստակի թիկնային մակերեսի, ցուցամատի հիմքի շրջանի և աջ դաստակի 5-րդ մատի հիմնային ֆալանգի թիկնային մակերեսի քերծվածքները, ստացել է 2009 թ. փետրվարի 9-ին ոստիկանության Վանաձորի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքում անձնական խուզարկության ժամանակ՝ իր կողմից գլխով գրասեղանի անկյունահատվածին և պատին հարվածելու հետևանքով: Այս կապակցությամբ քրեական գործ չի հարուցվել:

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
ինտերնետային կայք՝ www.hcav.am, www.hrlori.am
59 Tigran Mets st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am. URL: www.hcav.am, www.hrlori.am

Քրեական գործ չհարուցելու մասին քննիչի որոշումը կազմակերպության կողմից բողոքարկվել է ընդհանուր իրավասության դատարան, այնուհետև ՀՀ վերաքննիչ և ՀՀ վճռաբեկ դատարաններ: Դատարանների կողմից ևս կազմակերպության բողոքները մերժվել են:

2010 թվականի հունվարին կազմակերպությունը դիմում է ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

Գործ 5

Դեպքի նկարագրություն

2008 թ. սեպտեմբերի 11-ին՝ ժամը 10:00-11:00-ն ընկած ժամանակահատվածում, Մ.Բ.-ն բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Տաշիրի բաժին՝ կեղծ փողերի պատրաստման, պահման և իրացման կասկածանքով:

Մ.Բ.-ն հարցաքննվել է ոստիկանության աշխատակիցներից մեկի սենյակում, որտեղ նրան հայհոյել են, ծեծել, այնուհետև նաև տեղափոխել մեկ այլ սենյակ, որտեղ ներկա են եղել ոստիկանության բաժնի պետը և քննիչներ:

Սեպտեմբերի 11-ի լույս 12-ի գիշերը ոստիկանության աշխատակիցները նորից են ծեծել Մ.Բ-ին: Սեպտեմբերի 12-ին Մ.Բ.-ն տեսել է, թե ինչպես են ոստիկանության բաժին բերում իր կնոջը, այնուհետև ոստիկանության 2 աշխատակիցներ տեղեկացրել են, որ ծեծում են իր կնոջը և ծեծը դադարեցնելու համար անհրաժեշտ է, որ հանցագործության մասին ինքնախոստովանական ցուցմունքներ ներկայացնի:

Սեպտեմբերի 12-ին ոստիկանության Տաշիրի բաժնի աշխատակիցները իրենց անձնական մեքենայով Մ.Բ-ին տեղափոխել են ոստիկանության Վանաձորի բաժին /մոտ 50 կմ հեռավորություն/: Ճանապարհին ոստիկանության աշխատակիցներից մեկը զենքով սպառնացել է նրան՝ ի ցույց դնելով ատրճանակը:

Այնուհետև ոստիկանության Վանաձորի բաժնից նորից տեղափոխել են ոստիկանության Տաշիրի բաժին: Մ.Բ.-ն ֆիզիկական ցավեր է ունեցել և ոստիկանության Տաշիրի բաժնի աշխատակիցը վերջինիս ցավազրկող դեղ է տվել, պայմանով, որ գրի իր պահանջած ցուցմունքները: Սեպտեմբերի 15-ին Մ.Բ.-ին այցելել է հանրային պաշտպան, սակայն քննիչի սպառնալիքների ազդեցությամբ վերջինս հրաժարվել է հանրային պաշտպանից: 2008 թ. սեպտեմբերի 23-ին Մ.Բ.-ին տեղափոխել են «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկ, որից առաջ ոստիկանության Տաշիրի բաժնի աշխատակիցները սպառնացել են, որ իրենց դեմ բողոք ներկայացնելու դեպքում կսպանեն Մ.Բ.-ի եղբորը և ընտանիքի մյուս անդամներին:

Կազմակերպության կողմից ձեռնարկված միջոցառումները և պետության դիրքորոշումը

Կազմակերպության կողմից հաղորդում է ներկայացվել ՀՀ դատախազություն, սակայն քրեական գործ չի հարուցվել:

Գործ 6

Դեպքի նկարագրություն

2008 թ. հոկտեմբերի 21-ին՝ ժամը 14.00-ի սահմաններում, ք. Վանաձորի Ղշլաղ թաղամասում թմրամիջոցի ապօրինի իրացման կասկածանքով ոստիկանության Վանաձորի բաժին բերման է ենթարկվել Ռ.Ս.-ն: Ռ.Ս.-ն հայտնել է, որ ոստիկանության Վանաձորի բաժնում ենթարկվել է ֆիզիկական բռնությունների: Մասնավորապես՝ 2008 թ. հոկտեմբերի 21-ի լույս 22-ի գիշերը՝ ժամը 01:00-ի սահմաններում, Ռ.Ս.-ն գտնվել է քննիչի աշխատասենյակում, սակայն նախօրեին ծեծի ենթարկվելու արդյունքում չի կարողացել ցուցմունքներ տալ: Քննիչը նրան թույլատրել է տուն գնալ, պայմանով, որ առավոտյան կներկայանա ոստիկանության բաժին: Առավոտյան Ռ.Ս.-ն ներկայացել է ոստիկանության Վանաձորի բաժին, որտեղ նորից ենթարկվել է ֆիզիկական բռնությունների: Միաժամանակ ոստիկանության աշխատակիցները սպառնացել են, որ հանցագործության մասին ինքնախոստովանական ցուցմունքներ չներկայացնելու արդյունքում կվնասեն նրա ընտանիքի անդամներին:

Կազմակերպության կողմից ձեռնարկված միջոցառումները և պետության դիրքորոշումը

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
ինտերնետային կայք՝ www.hcav.am, www.hrlori.am
59 Tigran Mets st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am. URL: www.hcav.am, www.hrlori.am

Կազմակերպության կողմից հաղորդում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազություն, սակայն քրեական գործ չի հարուցվել:

Գործ 7

Դեպքի նկարագրություն

2009 թ. ապրիլի 25-ին ոստիկանության Գուգարքի բաժնի աշխատակիցները հեռախոսազանգով ոստիկանության բաժին են հրավիրել Լոռու մարզի գյուղ Դարպասի բնակիչ Ա.Մ.-ին: Ոստիկանության բաժնում նրան տեղեկացրել են, որ Ա.Մ.-ն կասկածվում է գողության մեջ: 2009 թ. մայիսի 11-ին նորից Ա.Մ.-ին հեռախոսազանգով հրավիրել են ոստիկանության բաժին: Մայիսի 12-ին Ա.Մ.-ն ներկայացել է ոստիկանություն, որտեղ նրան առաջարկել են ինքնախոստովանական ցուցմունքներ տալ հանցագործության վերաբերյալ: Ա.Մ.-ն հայտնել է, որ ինքը ոչնչից տեղյակ չէ: Այդ ժամանակ ոստիկանության աշխատակիցներից մեկը խփել է նրա վզին, մյուսը՝ մեջքին, երբ Ա.Մ.-ն ընկել է գետնին, ոստիկանության աշխատակիցը կանգնել է նրա ոտքերի վրա: 2009 թ. մայիսի 13-ին Ա.Մ.-ին տեղափոխել են «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկ, որտեղ արտաքին զննության մատյանում նրա մարմնական վնասվածքների վերաբերյալ արվել են գրառումներ:

Կազմակերպության կողմից ձեռնարկված միջոցառումները և պետության դիրքորոշումը

Դեպքի կապակցությամբ կազմակերպությունը հաղորդում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազություն, սակայն քրեական գործի հարուցումը մերժվել է:

Գործ 8

Դեպքի նկարագրություն

2008 թ. մայիսի 18-ին Լոռու մարզի Մարգահովիտ գյուղի բնակիչ Վ.Խ.-ին տևական ծեծի է ենթարկել համագյուղացի Ա.Մ.-ն, որի հետևանքով Վ.Խ.-ի առողջական վիճակը կտրուկ վատացել է:

Վ.Խ.-ն զանգահարել է գյուղապետարան, հայտնել կատարված դեպքի մասին, գյուղապետին խնդրել, որ այդ մասին անմիջապես հայտնի ոստիկանությանը: Քիչ անց Վ.Խ.-ի տուն է եկել ոստիկանության թաղային տեսուչը: Տեսնելով, որ ծեծի արդյունքում Վ.Խ.-ն իրեն վատ է զգում՝ ոստիկանության թաղային տեսուչը շտապ օգնություն է կանչել, սակայն վերջինիս վատ վիճակի պատճառով չեն կարողացել տեղափոխել հիվանդանոց:

Վ.Խ.-ն հաջորդ օրն անձամբ ներկայացել է ոստիկանության Գուգարքի բաժին և տեղեկացրել կատարվածի մասին:

Գուգարքի քննչական բաժանմունքի ավագ քննիչ Գ.Հ.-ն սպառնացել է Վ.Խ.-ին դատապարտել ազատազրկման, եթե վերջինս իրեն ծեծի ենթարկելու փաստի վերաբերյալ բողոք ներկայացնի:

Նշված սպառնալիքի ազդեցությամբ Վ.Խ.-ն հրաժարվել է նախորդ օրը ներկայացրած հաղորդումից և դիմում գրել այն մասին, որ հաշտվում է իրեն ծեծի ենթարկած համագյուղացու հետ:

Վ.Խ.-ին ծեծի ենթարկելու փաստի առթիվ քրեական գործ չի հարուցվել:

Կատարվածից հետո Վ.Խ.-ի առողջական վիճակը գնալով վատացել է: Նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն, սակայն փորձաքննության արդյունքներն այդպես էլ Վ.Խ.-ին չեն ներկայացվել:

Կազմակերպության կողմից ձեռնարկված միջոցառումները և պետության դիրքորոշումը

2009 թ. հունվարի 23-ին կազմակերպությունը դեպքի կապակցությամբ հաղորդում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին, պատճենը՝ Լոռու մարզի դատախազին՝ պահանջելով վերացնել ոստիկանության անգործությունն ու Վ.Խ.-ի առողջությանը հասցված վնասի հիմքով քրեական գործ հարուցել:

Քրեական գործ չի հարուցվել:

2009 թ. փետրվարի 19-ին կազմակերպությունը դարձյալ հաղորդում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազություն՝ նշելով Լոռու մարզի քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Հ.-ի ճնշումների ու սպառնալիքների մասին:

2009 թվականի մարտի 6-ին Լոռու մարզի դատախազությունը հայտնել է, որ կազմակերպության հաղորդումների քննարկմամբ Վ.Խ.-ի կողմից նշված հանգամանքները չեն հիմնավորվել:

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
ինտերնետային կայք՝ www.hcav.am, www.hrlori.am
59 Tigran Mets st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am. URL: www.hcav.am, www.hrlori.am

2010 թվականի գործեր

Գործ 1

Դեպքի նկարագրություն

2010 թ. փետրվարի 20-ին որդու՝ Ս.Ք.-ի իրավունքների պաշտպանության խնդրանքով մեզ է դիմել նրա մայրը՝ Ն.Վ.-ն:

Վերջինս հայտնել է, որ 2010 թ. փետրվարի 20-ին՝ ժամը 09:20-ի սահմաններում, մի խումբ տղաներ, ներկայանալով որպես ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժնի Բազումի բաժանմունքի աշխատակիցներ, առանց համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու՝ մտել են նրա բնակարան և Ս.Ք.-ին տարել անհայտ ուղղությամբ:

Ըստ Ս.Ք.-ի՝ փետրվարի 20-ին՝ ժամը 9-ի սահմաններում, 4 ոստիկան եկել են իրենց տուն, ասել, որ ոստիկանության պետը կանչում է: Վերջինս հարցրել է՝ ծանուցագիր ունեն, թե ոչ, նրան պատասխանել են, որ նման դեպքերում ծանուցագիր պետք չէ, այնուհետև մեքենայով տեղափոխել ոստիկանության Բազումի բաժին: Ըստ Ս.Ք. -ի՝ նրան տարբեր մարդկանց մոտ են տարել, մատնահետքերը վերցրել, որից հետո տարել են ոստիկանության պետի մոտ: Ոստիկանության պետը համոզել է Ս.Մ.-ին, որ նա խոստովանի՝ իբր կռիվ է եղել:

Ս.Ք.-ն հայտնել է, որ նման դեպք տեղի չի ունեցել: Որից հետո Ս.Ք.-ին տարել են ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժնի Գուգարքի բաժանմունքի քննչական բաժին: Այնտեղ նույնպես տարբեր ոստիկանների մոտ հարցաքննել են, պահանջել, որ խոստովանի, թե կռիվ է եղել: Ս.Ք.-ն Գուգարքի բաժանմունքի քննչական բաժնում գրել է, որ ոչ մի կռիվ չի եղել, ինքն ընկել է սահնակի վրա, որի պատճառով ստացել է մարմնական վնասվածքներ:

Կազմակերպության կողմից ձեռնարկված միջոցառումները և պետության դիրքորոշումը

Կազմակերպության ղեկավարը զանգահարել է ոստիկանության Բազումի բաժանմունք, որտեղից տեղեկացրել են, որ Ս.Ք.-ն ոստիկանության Բազումի բաժանմունքում չի գտնվում:

Կազմակերպության աջակցությամբ Ն.Վ.-ն հաղորդում է ներկայացրել ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժին՝ որդու գտնվելու վայրը պարզելու խնդրանքով: Սակայն նրա հաղորդումը ոչ միայն չեն ընդունել, այլև Ն.Վ.-ի նկատմամբ ցուցաբերվել է կոպիտ, անքաղաքավարի վերաբերմունք: Միայն բանավոր կարգով հայտնել են, որ Ս.Ք.-ն գտնվում է ոստիկանության Բազումի բաժանմունքում:

Այնուհետև կազմակերպության կողմից պատրաստվել է հաղորդում՝ ուղղված ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչություն՝ ոստիկանության աշխատակիցների անօրինական գործողությունների վերաբերյալ, ինչպես նաև պահանջվել է տեղեկատվություն տրամադրել Ս.Ք.-ի պահման վայրի մասին:

Հաղորդումը ներկայացնելուց հետո՝ նույն օրը, ժամը 17:00-ի սահմաններում, մոտ 7 ժամ անազատության մեջ գտնվելուց հետո Ս.Ք.-ն ազատ է արձակել:

Կազմակերպության հաղորդմանը ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժնի Բազումի բաժանմունքից գրավոր պատասխանել են 2 օր անց:

Դեպքից հետո ոստիկանության աշխատակիցների նկատմամբ պատասխանատվության ոչ մի միջոց չի կիրառվել:

Գործ 2

Դեպքի նկարագրություն

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկից Ա.Մ.-ն և Վ.Տ.-ն տեղեկացրել են, որ 2009 թվականի սեպտեմբերի 29-ին գողության մեղադրանքով ձերբակալվել են և տեղափոխվել ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Սպիտակի բաժին, որտեղ նրանք պահվել են մոտ 12 ժամ: Այդ ընթացքում ոստիկանության աշխատակիցների կողմից նրանք պարբերաբար ենթարկվել են ֆիզիկական բռնությունների: Ա.Մ.-ի նկատմամբ կիրառված ֆիզիկական բռնությունները, փոքր ընդմիջումներով, տևել է մոտ 4-5 ժամ:

Ոստիկանության աշխատակիցները ռետինե մահակներով հարվածներ են հասցրել Ա.Մ.-ի մարմնի տարբեր հատվածներում: Այդ ընթացքում Ա.Մ.-ն ոստիկանության աշխատակիցներին տեղեկացրել է, որ իր գլուխը վիրահատված է, բայց ոստիկանության աշխատակիցները որևէ ուշադրություն չեն դարձրել և շարունակել են ծեծը: Մեկ օր անց Ա. Մ.-ին տեղափոխել են «Վանաձոր» ձերբակալվածների պահման

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
ինտերնետային կայք՝ www.hcav.am, www.hrlori.am
59 Tigran Mets st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am. URL: www.hcav.am, www.hrlori.am

վայր, որտեղ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Սպիտակի բաժնում նրա նկատմամբ կիրառված ծեծի արդյունքում առողջական վիճակը վատացել է: Ժամը 13:00-14:00-ի շրջաններում նրան տեղափոխել են քաղաքացիական հիվանդանոց, որտեղ մարմնի վրա կոտրվածքներ ունենալու կասկածանքով իրականացվել է ռենտգեն հետազոտություն, սակայն կոտրվածքներ չեն հայտնաբերվել: 2009 թվականի սեպտեմբերի 30-ի գիշերը Ա.Մ.-ի դրությունն այնքան է վատացել, որ ոստիկանության աշխատակիցները ցավը մեղմելու համար հանգստացնող կաթիլներ են տվել:

2009 թվականի հոկտեմբերի 3-ին Ա.Մ.-ն տեղափոխվել է «Վանաձոր» ՔԿՀ, որտեղ մարմնի վրա հայտնաբերված վնասվածքների հիման վրա ընդունման և արտաքին զննության մատյանում կատարվել են հետևյալ գրանցումները. «Ձախ թևատակի և ուսահոդի հատվածներում կապտուկներ՝ ցանավորման տեսքով»:

Նույն կասկածանքով նույն օրը ոստիկանության Սպիտակի բաժին բերման ենթարկված Վ.Տ.-ն ևս տեղեկացրել է, որ ոստիկանության աշխատակիցները ռետինե մահակներով հարվածներ են հասցրել նրա մարմնի տարբեր հատվածներում: Ոստիկանության աշխատակիցների կողմից կիրառված բռնությունների արդյունքում նա մի քանի անգամ կորցրել է գիտակցությունը:

Վ.Տ.-ն ոստիկանության Վանաձորի բաժնում գտնվելու ընթացքում ենթարկվել է բժշկական զննության, ռենգեն հետազոտության, քանի որ նրա առողջական վիճակը անհանգստություն է առաջացրել ոստիկանության աշխատակիցների մոտ:

2009 թվականի հոկտեմբերի 3-ին Վ.Տ.-ն տեղափոխվել է «Վանաձոր» ՔԿՀ, որտեղ նրա մարմնի վրա հայտնաբերված վնասվածքների հիման վրա ընդունման և արտաքին զննության մատյանում կատարվել են հետևյալ գրանցումները. «Ձախ ձեռքի արմնկահոդի ներսային հատվածում 4-5 սմ լայնության 8-9 սմ երկարությամբ կապտուկ»:

Կազմակերպության կողմից ձեռնարկված միջոցառումները և պետության դիրքորոշումը

2009 թ. նոյեմբերին կազմակերպության կողմից հաղորդում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազություն՝ ոստիկանության Սպիտակի բաժնի աշխատակիցների անօրինական գործողությունների վերաբերյալ:

2010 թ. հունվարի 25-ին կազմակերպությունը ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնից ստացել է որոշում՝ քրեական հետապնդում չհրականացնելու մասին: Որոշումը հիմնավորվել է նրանով, որ Ա.Մ.-ն և Վ.Տ.-ն քրեակատարողական հիմնարկից ցուցմունքներ են տվել այն մասին, որ մարմնի վրա առկա վնասվածքները ստացել են սայթաքելու և վայր ընկնելու հետևանքով: Սակայն որևէ կերպ չի ներկայացվել հիմնավոր ապացույց այն մասին, որ Վ.Տ.-ն և Ա.Մ.-ն ոստիկանության Սպիտակի բաժին տեղափոխվել են նշված մարմնական վնասվածքներով: Ոստիկանության բաժին բերման ենթարկելուց հետո նրանց մարմնական զննության չեն ենթարկել, որևէ արձանագրություն այդ մասին չի կազմվել:

Այդ հիմքով էլ կազմակերպության կողմից քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը բողոքարկվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան: Դատարանը բողոքը մերժել է, և մերժումը կազմակերպության կողմից բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը բեկանել է որոշումը, այն ուղարկել ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության: Այս անգամ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը բավարարել է բողոքը, վերացրել է քրեական գործ չհարուցելու մասին որոշումը: Այս որոշումն էլ բողոքարկվել է Լոռու մարզի դատախազության կողմից ՀՀ վերաքննիչ քրեական դատարան: Լոռու մարզի դատախազության որոշումը ևս վերաքննիչ դատարանը բավարարել է: Սակայն այս որոշումը կազմակերպության կողմից բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան: ՀՀ վճռաբեկ դատարանը կազմակերպության կողմից ներկայացված բողոքը բավարարվել է և գործն ուղարկվել է նույն դատարան նոր քննության:

Գործ 3

Դեպքի նկարագրություն

2010 թվականի մարտի 29-ին «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկից ազատազրկման դատապարտված մի քանի անձինք տեղեկացրել են, որ գողության կասկածանքով ոստիկանության բաժին բերման ենթարկվելու և այնտեղ մնալու ընթացքում ոստիկանության աշխատակիցների կողմից ենթարկվել են ֆիզիկական բռնությունների:

2009 թ. նոյեմբերին Ա. Բ.-ն բերման է ենթարկվել, 3 օր պահվել է «Շենգավիթ» ձերբակալվածների պահման վայրում: Այդ ընթացքում՝ առավոտյան ժամը 9:00-10:00-ն ընկած ժամանակահատվածում, նրան տեղափոխել են «Կենտրոն» ոստիկանություն, երեկոյան 20:00-21:00-ն ընկած ժամանակահատվածում

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
ինտերնետային կայք՝ www.hcav.am, www.hrlori.am
59 Tigran Mets st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am. URL: www.hcav.am, www.hrlori.am

նորից հետ են տեղափոխել «Շենգավիթ» ոստիկանություն: «Կենտրոն» ոստիկանությունում ոստիկանության 2-3 աշխատակից 2-3 ժամը մեկ ծեծել են նրան այնպես, որ ծեծի ընթացքում հասցված հարվածների հետևանքով աթոռը կոտրվել է Ա. Բ.-ի մարմնի վրա: Բացի այդ, «Շենգավիթ» ոստիկանությունում նրան չեն կերակրել:

2009 թ. նոյեմբերին Գ. Ա.-ն իր տնից բերման է ենթարկվել, որի ընթացքում նրան ձեռնաշղթաներ են հագցրել: Գ. Ա.-ին 2 օր պահել են «էրեբունի», 1 օր՝ «Շենգավիթ» ձերբակալվածների պահման վայրում, այնուհետև ևս 1 օր՝ «էրեբունի» ձերբակալվածների պահման վայրում:

Գ. Ա.-ին ևս «էրեբունի» ձերբակալվածների պահման վայրում պահելու ընթացքում՝ առավոտյան ժամը 9:00-10:00-ն ընկած ժամանակահատվածում, տեղափոխել են «Կենտրոն» ոստիկանություն, երեկոյան հետ տեղափոխել «էրեբունի» ՁՊՎ, որտեղ նրան ենթարկել են ֆիզիկական բռնությունների:

Կազմակերպության կողմից ձեռնարկված միջոցառումները և պետության դիրքորոշումը

2010 թ. ապրիլի 30-ին դեպքի կապակցությամբ կազմակերպությունը հաղորդում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազություն:
ՀՀ գլխավոր դատախազության կողմից ներկայացված հաղորդումը ուղարկվել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչություն, որպե սզ ի Ա.Բ.-ի, Գ.Ա.-ի և Վ.Ա.-ի դեմ հարուցված ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի հատկանիշներով քրեական գործին կցեն և համատեղ ընթացքը լուծեն:

Գործ 4

Դեպքի նկարագրություն

2010 թ. մարտի 29-ին իրենց իրավունքների պաշտպանության հարցով մեր կազմակերպություն են դիմել Լոռու մարզի Բազում գյուղի էներգետիկների ավանի բնակիչներ Գ.Ծ.-ն, Հ.Ա.-ն:
Քաղաքացիների խնդիրը կայանում էր նրանում, որ նույն ավանը սպասարկող ոստիկանության Գուգարքի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի ավագ օպերլիազոր Գ.Ա.-ն, շուրջ 5 տարի չարաշահելով իր պաշտոնական դիրքը, տվյալ համայնքի բնակիչների նկատմամբ իրականացրել է անօրինական գործողություններ:

Գ.Ծ.-ի նկատմամբ ոստիկանության աշխատակիցը սկզբում մեղադրանքներ է ներկայացրել համագյուղացիներից մեկի սեփականության իրավունքի խախտման համար: Այս մեղադրանքը չի հիմնավորվել: Այնուհետև Գ.Ծ.-ին ենթարկել է վարչական պատասխանատվության՝ ավտոմեքենայի պետահամարանիշերի բացակայության հիմքով, սակայն այս պատասխանատվությունը ևս դատական կարգով չի հաստատվել: Այնուհետև ոստիկանության աշխատակիցն այցելել է գյուղ և Գ.Ծ.-ին ստիպել, որ վերջինս իրեն 20 լիտր մեքենայի վառելիք տա, քանի որ վերջինիս պատճառով «ահագին վազվզել է» և պետք է իրեն պատճառած վնասների համար փոխհատուցում ստանա:

Հ.Ա.-ն գողության համար ենթարկվել է քրեական պատասխանատվության՝ ազատազրկման: Ազատ արձակվելուց հետո ոստիկանության աշխատակիցը Հ.Ա.-ին ամեն անգամ հանդիպելիս անվանել է գող, ավազակ, սրիկա և այլն: Վերջին անգամ Գ.Ա.-ն Հ.Ա.-ին հաշմանդամի իր սայլակից վայր է գցել և սայլակով հարվածներ հասցրել նրա մարմնի տարբեր հատվածներում /Հ.Ա.-ն 1-ին խմբի հաշմանդամ է, զրկված է 2 ոտքից/:

Կազմակերպության կողմից ձեռնարկված միջոցառումները և պետության դիրքորոշումը

Դեպքի կապակցությամբ կազմակերպությունը հաղորդում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազություն, սկսվել է ծառայողական քննություն, որի շրջանակներում կազմակերպության ղեկավարը հրավիրվել է ոստիկանություն՝ բացատրություններ տալու:
Ծառայողական քննության արդյունքում քրեական գործ չի հարուցվել, մերժումը բողոքարկելու համար կազմակերպությունը պահանջել է ծառայողական քննության եզրակացությունը, սակայն մերժվել է:

Գործ 5

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
ինտերնետային կայք՝ www.hcav.am, www.hrlori.am
59 Tigran Mets st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am. URL: www.hcav.am, www.hrlori.am

Դեպքի նկարագրություն

2010 թվականի ապրիլի 13-ին ոստիկանության Չարենցավանի բաժնի աշխատակիցները առավոտյան ժամը 07:50-ին Դ.Գ.-ին բերման են ենթարկել ոստիկանություն:
2010 թվականի ապրիլի 16-ին Դ.Գ.-ին տեղափոխել են «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ:

«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում մոր հետ տեսակցության ժամանակ Դ.Գ.-ն պատմել է, որ ոստիկանության Չարենցավանի բաժնում գտնվելու ժամանակ ոստիկանության աշխատակիցներն իրեն բռնության են ենթարկել: Քննիչը բռնել է իր կոկորդից, փորձել է խեղդել, որի հետևանքով ինքն ինքնախոստովանական ցուցմունքներ է տվել, թե իբր մասնակցել է գողությանը: 2010 թվականի ապրիլի 14-ին և ապրիլի 15-ին, երբ ծեծի հետևանքով ինքնախոստովանական ցուցմունքներ է ներկայացրել, հրաժարվել է ուտելիքից, հացադուլ հայտարարել:

2010 թվականի 30-ին, երբ Դ.Գ.-ի մայրը վերադարձել է քրեակատարողական հիմնարկից, ոստիկանության աշխատակիցներից մեկը հանդիպել է նրան, փորձել է համոզել՝ հրաժարվել Դ.Գ.-ի կողմից մորը հայտնած տեղեկությունների հրապարակայնացումից: Հետո էլ սպառնացել է. «Դու գիտես, որ ես բերդ մտնեմ մի երկու խոսք ասեմ, էնտեղ Դ.Գ.-ին ինչ կանեն»:

Մինչև 2010 թվականի ապրիլի 14-ը Դ.Գ.-ի նկատմամբ ոստիկանության աշխատակիցների կողմից իրականացված հետապնդումների մասին

1994 թվականին, երբ Դ.Գ.-ն վերադարձել է զինվորական ծառայությունից, Չարենցավանի ոստիկանության բաժնի աշխատակիցներից մեկը կանչել է նրան ու ասել, որ Դ.Գ.-ն շրջի Չարենցավան քաղաքում, ոստիկանությանը «գործ տա», որի դիմաց նրան կվարձատրեն:
2003 թվականին ինչ-որ գողություն է կատարվել, որի համար ձերբակալել են նաև Դ.Գ.-ին: Ոստիկանության բաժնում ոստիկանության աշխատակիցները ծեծել են Դ.Գ.-ին, աղյուսով հարվածել են նրա ոտքերի այն հատվածին, որտեղ զինծառայության ժամանակ վիրավորվելու հետևանքով փամփուշտի մնացորդներ են մնացել: Երբ Դ.Գ.-ն ցավից կռացել և բռնել է ոտքերը, նույն աղյուսով հարվածել են Դ.Գ.-ի գլխին, որի հետևանքով գլուխը մոտ 4,5 սմ երկարությամբ ճեղքվել է: Ոստիկանության աշխատակիցները ստիպված շտապ օգնություն են հրավիրել և Դ.Գ.-ին տեղափոխել նույն քաղաքի հիվանդանոց, հետո առողջական վիճակը ծանրանալու հետևանքով՝ մայրաքաղաք Երևան՝ մասնագիտացված հիվանդանոց:
Այստեղ ոստիկանության աշխատակիցները համոզել են Դ.Գ.-ին, որ բժշկին տեղեկացնի, թե իբր իր որդին վայր է ընկել ու դրա հետևանքով էլ գլխի վնասվածքներ է ստացել:
Երբ Դ.Գ.-ի առողջական վիճակը կայունացել է, նրան գողության մեղադրանքով ձերբակալել են և դատապարտել ազատազրկման:
Պատիժը կրելուց հետո ևս Դ.Գ.-ի նկատմամբ ոստիկանության աշխատակիցների հետապնդումները շարունակվել են:

Կազմակերպության կողմից ձեռնարկված միջոցառումները և պետության դիրքորոշումը

Կազմակերպությունը ներգգրավել է պաշտպան՝ Դ.Գ.-ի պաշտպանության նպատակով:

Գործ 6

Դեպքի նկարագրություն

2010 թ. մայիսի 12-ին իրենց շահերի պաշտպանության համար մեր կազմակերպություն են դիմել Տավուշի մարզի Բերդ քաղաքի բնակիչներ Հ.Մ.-ն և Վ.Գ.-ն:

Քաղաքացիների խնդիրը կայանում էր նրանում, որ նրանց որդին՝ Գ.Մ.-ն, Բերդ քաղաքի ոստիկանության աշխատակիցների կողմից անդընդհատ ենթարկվել էր անօրինական հետապնդումների:

2009 թ. ապրիլ ամսին՝ առավոտյան ժամը 7:40-ին, երբ Հ.Մ.-ի տան անդամները քնած են եղել, նրանց բնակարան են մուտք գործել երկու ոստիկաններ՝ առանց ոստիկանական համազգեստի: Տան անդամները նրանց ոտքերի ձայներից սարսափահար արթնացել են, որի արդյունքում Հ.Մ.-ի մայրը և

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
ինտերնետային կայք՝ www.hcav.am, www.hrlori.am
59 Tigran Mets st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am. URL: www.hcav.am, www.hrlori.am

անչափահաս դուստրը սկսել են կակազել: Ընտանիքի անդամները ոստիկաններից պահանջել են դուրս գալ իրենց բնակարանից, բայց նրանք պատասխանել են, որ իրենք ոստիկաններ են և կատարում են խուզարկություն: Երբ պահանջել են խուզարկություն կատարելու հիմքերը, ոստիկանները ոչինչ չեն ներկայացրել:

2010 թ. մայիսին Գ.Մ.-ին բերման են ենթարկել ոստիկանություն: Երբ հարազատները հետաքրքրվել են բերման ենթարկելու հիմքերի մասին, ոստիկանության հերթապահ մասում նրանց տեղեկացրել են, որ սովորական հարցաքննություն է, շուտով բաց կթողնեն:

Գ.Մ.-ի մայրը ոստիկանության բաժնից չի հեռացել, նստել է ոստիկանության շենքի կողքի նստարանին և լսել, թե ինչպես են ներսում ծեծում որդուն, և թե ինչպես է վերջինս գոռգոռում:

Գ.Մ.-ի մայրն անմիջապես բարձրացել է հարցաքննության սենյակ, ներս մտել և խփել է իր որդուն ծեծող ոստիկանության աշխատակցին:

Նա տեսել է, որ ոստիկաններից մեկը բռնած է որդու ուսերից, ոտքերը դրած նրա ոտքերին, իսկ մյուս ոստիկանը ռետինե մահակով հարվածներ է հասցնում որդուն՝ Գ.Մ.-ի թիկունքի հատվածում:

Կազմակերպության կողմից ձեռնարկված միջոցառումները և պետության դիրքորոշումը

Դեպքի կապակցությամբ կազմակերպությունը հաղորդում է ներկայացրել ՀՀ հատուկ քննչական ծառայություն, ՀՀ ոստիկանությունում հարուցվել է ծառայողական քննություն:

Գործ 7

Դեպքի նկարագրություն

2010 թ. մայիսի 27-ին իր շահերի պաշտպանության համար նամակով կազմակերպություն է դիմել «Նուբարաշեն» ՔԿՀ-ի կալանավոր Կ.Մ-ն:

Կ.Մ-ն իր սեփական մեքենայով, որը օգտագործել է որպես երթուղային տաքսի, կանգնած է եղել Երևան քաղաքում: Նրան մոտեցել է մի ուղևոր, խնդրել իրեն տեղափոխել: Այդ պահին նրանց մոտեցել են «Կենտրոն» ոստիկանության աշխատակիցները և առանց որևէ հիմքի՝ բերման ենթարկել ոստիկանության բաժին:

Ոստիկանության աշխատակիցների կողմից Կ.Մ.-ն և ուղևորը ծեծի են ենթարկվել, որի արդյունքում ոստիկանության աշխատակիցները ջարդել են ուղևորի կողոսկրը: Ըստ Կ.Մ.-ի՝ իրեն ծեծի ենթարկելուց հետո երեք օր արյուն է մեզել: Ծեծը նպատակ է հետապնդել նրանից ինքնախոստովանական ցուցմունքներ կորզել այն մասին, որ նա տեղյակ է, որ ուղևորի մոտ թմրանյութ կա: Բռնությունների արդյունքում Կ.Մ.-ն ինքնախոստովանական ցուցմունքներ է տվել:

Երկու օր անց Կ.Մ.-ին և իր ուղևորին տարել են դատարան, դատարանի ճանապարհին քննիչը սպառնացել է, թե «Խելոք կմնաք, ձեր վրա արդեն գործ է հարուցված»: Դատարանում ուղևորին առանձին դահլիճ են տարել, իսկ Կ.Մ.-ն ոստիկանի հետ մնացել է դրսում: Մի քանի րոպե անց դատարանի դահլիճում մեծ խառնաշփոթ է սկսվել, որից հետո տեղեկացրել են, որ ուղևորը իրեն գցել է դատարանի դահլիճի պատուհանից: Ըստ Կ.Մ.-ի՝ ուղևորի մահվան պատճառը եղել են ոստիկանության աշխատակիցների բռնությունները և հոգեբանական ճնշումները:

Կազմակերպության կողմից ձեռնարկված միջոցառումները և պետության դիրքորոշումը

Դեպքի կապակցությամբ կազմակերպությունը հաղորդում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին և ՀՀ հատուկ քննչական ծառայություն, հաղորդումը ուղարկվել է ՀՀ ոստիկանության գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչություն:

ՀՀ գլխավոր դատախազության ցուցումով կազմակերպության կողմից ներկայացված հաղորդումը կցվել է Կ.Մ.-ի և Գ.-ի դեմ հարուցված քրեական գործին՝ համատեղ ընթացքը լուծելու համար:

Գործ 8

Դեպքի նկարագրություն

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
ինտերնետային կայք՝ www.hcav.am, www.hrlori.am
59 Tigran Mets st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am. URL: www.hcav.am, www.hrlori.am

2010 թ. սեպտեմբերի 30-ին իր իրավունքների պաշտպանության հարցով մեր կազմակերպություն է դիմել «Վանաձոր» ՔԿՀ-ի դատապարտյալ Ա.Պ.-ն:

Խնդիրը կայանում էր նրանում, որ 2010 թ. սեպտեմբերի 4-ին «Վանաձոր» ՔԿՀ-ում՝ երկարատև տեսակցությունների սենյակում, նրան կնոջ և անչափահաս որդու ներկայությամբ, դաժանաբար ծեծի են ենթարկել քրեակատարողական հիմնարկի աշխատակիցները:

Կազմակերպության կողմից ձեռնարկված միջոցառումները և պետության դիրքորոշումը

Դեպքի կապակցությամբ կազմակերպությունը հաղորդում է ներկայացրել ՀՀ Լոռու մարզի դատախազին: ՀՀ Լոռու մարզի քննչական բաժնում դեպքի կապակցությամբ հարուցվել է քրեական գործ:

Գործ 9

Դեպքի նկարագրություն

2010 թ. հոկտեմբերի 17-ին՝ ժամը 17:00-ի սահմաններում, իր իրավունքների պաշտպանության հարցով մեր կազմակերպություն է դիմել Գ.Մ.-ն:

Խնդիրը կայանում էր նրանում, որ հոկտեմբերի 11-ին՝ ժամը 13:00-ի սահմաններում, Զ.Ռ.-ն քաղաքացիական համազգեստով ոստիկանության մեկ այլ աշխատակցի հետ գնացել է Գ.Մ.-ի տուն եւ իր մեքենայով նրան տարել ոստիկանության Տաշիրի բաժանմունք: Գ.Մ.-ի այն հարցին, թե ինչու են իրեն տանում ոստիկանություն, Զ.Ռ.-ն պատասխանել է՝ «կգնա'նք, կիմանաս»:

Ըստ Գ.Մ.-ի՝ ոստիկանության բաժանմունքում Զ.Ռ.-ն, իրեն տանելով առանձին սենյակ, փորձել է ճշտել, թե երբ է վճարելու իր ծնողներից վերցրած պանրի գումարը՝ 5500 դրամը: Գ.Մ.-ն պատասխանել է, որ երկու ամիս աշխատավարձ չի ստացել, ստանալու դեպքում անպայման կվճարի, որից հետո Զ.Ռ.-ն Գ.Մ.-ի կրծքավանդակի ձախ մասում բռունցքով երկու հարված է հասցրել:

Հարվածելուց հետո Զ.Ռ.-ն Գ.Մ.-ին հայտնել է. «Եթե Օթոն ասած չլիներ, որ քեզ մատով չկպչեմ, ես հիմա քեզ սատկացրած կլինեի»:

Կազմակերպության կողմից ձեռնարկված միջոցառումները և պետության դիրքորոշումը

2010 թ. հոկտեմբերի 17-ին՝ դեպքից 6 օր անց, կազմակերպության աշխատակիցներն ահազանգի հիման վրա այցելել են քաղաքացուն և առաջարկել գնալ հիվանդանոց բժշկական զննության և համապատասխան օգնության համար:

Հիվանդանոցում հետազոտություն կատարելուց հետո բժիշկը տվել է նախնական ախտորոշում՝ «Կրծքավանդակի ձախ հատվածի սալջարդ, չորրորդ, հինգերորդ կողերի կոտրվածքի կասկած»:

Նույն օրը բուժաշխատակիցները դեպքի մասին տեղեկացրել են ոստիկանության Տաշիրի բաժնին:

Ոստիկանության աշխատակիցները ժամանել են հիվանդանոց, դեպքի կապակցությամբ կազմել արձանագրություն եւ քաղաքացուն հրավիրել ոստիկանություն՝ հայտարարություն տալու: Քաղաքացին նույն օրը կազմակերպության անդամների ուղեկցությամբ գնացել է ոստիկանության բաժանմունք, որտեղ հանցագործության մասին հայտարարություն է տրվել: Քննիչի կողմից կայացվել է որոշում՝ քաղաքացու դատաբժշկական փորձաքննության նշանակման մասին:

Ներկայումս ՀՀ ոստիկանության քննչական բաժնի կողմից գործի վերաբերյալ նախապատրաստվում են նյութեր:

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
ինտերնետային կայք՝ www.hcav.am, www.hrlori.am
59 Tigran Mets st., Vanadzor, 377204, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am. URL: www.hcav.am, www.hrlori.am